ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2
ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-24/53 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **13 սեպտեմբերի 2024թ.**

2024թ-ի սեպտեմբերի 10-13-ը ՀՀ, ք. Երևան, Ալիխանյան եղբայրների փող., 2 շենք հասցեում գտնվող «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) շենքում տեղի ունեցավ ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-24/53 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Լ. Ավետիսյան՝ Հիմնադրամի արտադրատնտեսական բաժնի ղեկավար,

Ն. Շահնազարյան՝ Հիմնադրամի ավագ հաշվապահ.

Նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար՝ «ՓՐՈՄՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Վ. Էլոյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի երկու անդամները, բացակայում էր Հանձնաժողովի անդամ Ա. Բաղրամյանը, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Լ. Ավետիսյանը:

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-24/53 ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացրած մասնակցության հայտերի և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

1. ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-24/53 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ, ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ և ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Լ. Ավետիսյանը նիստը հայտարարեց բացված և հայտնեց տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների վերաբերյալ տեղեկատվությունը:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Աճուրդի մեկնարկային գին	Մեկնարկ	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ)
1	Լինոլեում	-	Չկայացած	138000

ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-24/53 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի ներկայացում և բացումը, ինչպես նաև հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և հիմնավորումներ չեն ներկայացվել:

ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-24/53 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր չեն ներկայացվել:

Կողմ՝ 2, դեմ՝ 0:

2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց՝

1. Ընթացակարգը հայտարարել չկայացած, և հաստատել ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-24/53 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին համակարգի կողմից գեներացված հայտարարության տեքստը:

Կողմ՝ 2, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Լ. Ավետիսյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ն. Շահնազարյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Վ. Էլոյան _____